# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լեվել-Էս ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/35 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | <<Լեվել-Էս>> ՍՊԸ | Գիշեր-ցերեկ (Zebra) տեսակի գալարավարագույրների տեխնիկական բնութագիր Գիշեր-ցերեկ տեսակի գալարավարագույրները նախատեսված են ներքին տարածքներում լուսավորության ճշգրտման և տեսադաշտի կարգավորման համար՝ ապահովելով ինչպես լուսաթափանց, այնպես էլ մասնակի մթնեցման ռեժիմներ։ 1. Կառուցվածք և հիմնական բաղադրիչներ Գալարավարագույրը բաղկացած է՝ • ալյումինե խողովակից, • երկշերտ կտորից (գիշեր-ցերեկ տիպ), • պտտվող (կառավարման) մեխանիզմից։ • Ալյումինե խողովակի տրամաչափը՝ 30-35 մմ։ • Կտորը երկկողմանի ամրացվում է խողովակին և մեխանիզմի միջոցով պտտվելով բարձրանում կամ իջնում է՝ հավաքվելով խողովակի վրա։ • Ամբողջ համակարգը ամրացվում է պատին կամ առաստաղին՝ համապատասխան ամրակների միջոցով։ • Կախելու համար նախատեսված պրուրակներ և դյուբելներ, կառնիզի համար հաշվարկված քանակով։ 2. Կառավարման համակարգ • Կառավարումը իրականացվում է մեխանիկական եղանակով (շղթայի միջոցով)։ • Մեխանիզմը պետք է ապահովի սահուն և անխափան աշխատանք՝ վարագույրի հավասարաչափ բարձրացում/իջեցում և դիրքի ֆիքսում։ 3. Նյութ և կառուցվածքային առանձնահատկություններ • Կտորը պատրաստված է պոլիէսթերից։ • Նյութը ներկված և ներծծված է հատուկ բաղադրությամբ՝ արևային ճառագայթներից պաշտպանելու և |

| | | |
|---|---|---|
| | | գունաթափման դիմադրություն ապահովելու համար: • Կտորը կազմված է հորիզոնական ուղղությամբ դասավորված՝ օ թափանցիկ (շղարշային) և օ անթափանց (խիտ) զուգահեռվող շերտերից: • Շղթայի միջոցով կարգավորելիս շերտերը համընկնում կամ տարանջատվում են՝ ապահովելով տարբեր աստիճանի լուսաթափանցելիություն և տեսադաշտի վերահսկում: 4. Գունային լուծում • Գալարավարագույրների գունային լուծումը ընտրվում և վերջնականապես հաստատվում է բացառապես պատվիրատուի կողմից: : Հիմնականում դիտարկվելու են վաքռ գույների նմուշները, օրինակները տես նկարի մեջ: • Մատակարարը ներկայացնում է գունային տարբերակների նմուշներ կամ կատալոգ: 5. Կոմպլեկտացիա և մատակարարում Գալարավարագույրները մատակարարվում են ամբողջական հավաքով, ներառյալ՝ • ալյումինե խողովակ, • կառավարման մեխանիզմ (շղթա), • ամրացման հարմարանքներ (կրոնշտեյններ), • և բոլոր անհրաժեշտ այլ բաղադրիչներ՝ լիարժեք շահագործումն ապահովելու համար: 6. Չափման միավոր և հաշվարկ • Գնումը կատարվում է քառակուսի մետրով (քմ): • Առաջարկվող գինը ներառում է տվյալ մակերեսին համապատասխան բոլոր անհրաժեշտ նյութերը, բաղադրիչները և հարմարանքները: Նշում. Եթե պատվիրատուն պահանջում է, օրինակ, 10 քմ գիշեր-ցերեկ տեսակի գալարավարագույր, ապա տվյալ մակերեսին համարժեք ամբողջական համակարգը (բոլոր բաղադրիչներով) ամբողջությամբ ներառված է առաջարկվող գնի մեջ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Левел-Эс ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |